


ՁԵՐԱԶ-ՏԷՄԻՐԱԿԻՊԱՆԵԱՆ

Դ Ա Մ Բ Ա Ր Ա Ն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Մ. ԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ  
1878



891. 99. 092

ՉԵՐԱՋ-ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Դ Ա Մ Բ Ա Ր Ա Ն

A  $\frac{II}{40751}$



ԿՍՏԱՆԴԵՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. Մ. ԱՇՃԵԱՆ ԵՎ ԸՆԿԵՐ  
1878

1870

1870

1870

1870

ԱՌ

ԿԱՐԱՊԵՏ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Տեսնելով այն տոժոյն տերև 'զոր աշնային հոյն իւր բունէ խելով կը տանի թաղել մօտակայ փոսին մէջ, այս Դամբարան ի գաղափարն յղացայ. և բոլոր այն սիրելիների հետ 'զորս մահն կորզած է մեր ծոցէ, քեզ կը նուիրեմ 'զայն, ո'հայր, առաջին սէրս և վերջին կորուստս :


Ե՛ Տ՛

ԱՌ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՓԷՆՏԻ ՓԱՓԱՋԵԱՆ

Եւ քեզ կը նուիրեմ այս մատենիկ, սիրելի մօրեղբայր, որ ողբացեալ հայրիս դագաղին քով, սիրովեցիր իւր որբացեալ ընտանիք, յայտարարելով թէ, այսուհետև նորա համար սիրտի հոսէ քո քիրտ, նորա գորով սիրտի ընու քո սիրտ :

Ե՛ Տ՛



# Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Հարկ է մի նախաբան , այո՛ , մինչև իսկ այս փոքր տետրակի համար , հազիւ աւելի ծանր քան այն երկու փետուրներ որք ծունդ տուին նմա : Այլ անհամեմատ կերպով բարձր է նորա գրական արժէք . երեք հատուածներ կը պարունակէ նա Մինաս Չերազ ստորագրուած : Ներօղամիտ շուրթեր և գրիչներ մերթ այդ մեծաշուք անունի կը կցեն անշուք անունս . և ես ահա՛ զիս ի հանդէս կ'ածեմ աստ Ազգայից դառտիարակուսիւն ի աննման հեղինակին հետ : Որպէս զի ցրուի ժողովուրդի չափազանց համարումն ինձ նկատմամբ , և բացատրուի ինչ որ անշուք յանդգնութիւն սխտի նկատուէր իմ կողմէ , պարտ կը համարիմ յայտարարել աստ մի անգամ ընդ միշտ թէ , մի նորոգիչ է մեծանուն բարեկամս , իսկ ես մի պարզ ջարդողիչ . թէ փոխ առնուլով Տանդէի գեղեցիկ բառերն , « նա է դուքս , նա տէր , և նա վարպետ , » և ես իբր շինական , իբր հպատակ և իբր աշակերտ միայն կ'ընկերանամ նմա ընթերցողին առջև :

Այս մի քանի բառեր հարկաւոր էին աստ : անօգուտ չը լինին դուցէ հետագայ տողերն ալ :

Իբր ժամանակի մէջ յաւէտ քան երբէք, հարկ էր մանաւանդ որ կենդանիների վիճակն զբազեցունէր ըզ մեզ քան մեռեալների յիշատակն, որքան ալ պատուական և նուիրական լինի դատուրեմն անճահ է այսօր Դամբարանի հրատարակումն : Նոցա, ոյց այս մտածումս սխտի ներշնչէ ներկայ տեսրակն, կը պատասխանեմ.

Արպէս զի խրատուսուին այն « արիներ և բարիներ » որք արեւին տակ են այժմ, հարկ է որ յիշատակուին այն « արիներ և բարիներ » որք հողին տակ են արդէն .

ԵՆՆԻՔԷՅՕՅ, 2 Հոկտեմբեր 1878 .

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՆԵՆԱՆ

# Դ Ա Մ Բ Ա Ր Ա Ն

ՅԱԿՈՐ ՓԱԼԵԱՆ            ՆԱՀԱՊԵՏ   ՌՈՒՍԻՆԵԱՆ  
ՂԱԶԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ    ԱՐԱՄ            ՆԵՐՍԻՍԵԱՆ  
ՅԱԿՈՐ ՄԿՐԵԱՆ            ԱՆԴՐԱՆԻԿ   ՆԱՐԼԵԱՆ



ԱՌ

Գ. Յ. ՍՎԱՃԵԱՆ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1875

Մի գերեզման բացուած էր աչքիս առջեւ, և այդ խաւարի մէջ լոյս կ'որոնէի :

Մի մատաղ ճակատ կը բարձրանար այդ գերեզմանէ, և այդ ճակատի վրայ կը կարդայի «Յակոր Փալեան» անունն :

Եւ սիրէի ես այդ երիտասարդ, զի մի տխուր հոգի կը կրէր : Տժգոյն էր աշնային տերեւների պէս, ուրուական որ կ'անցնէր, ստուեր որ կը սահէր : Եը նմանէր նա մի հողմակոծ եղէգի, ընկերական ովկիանի մի համր եզրին վրայ ծլած : Այս սիրտ մի խոց ունէր : Վշտակրութիւնն մի

վեհաճութիւնն է . քիչերի տրուած է այս թուիչ որ մինչև Աստուած կը բարձրացունէ :

Կը տիրէի ես այդ երիտասարդ, զի, իւր մտայլ հոգիի մէջ, հաւատի փարոսն կը կրէր : Կը հաւատար գեղեցիկին, կը հաւատար բարիին, կը հաւատար ճշմարիտին : Մի պանդուխտ էր նա . ապագայն էր իւր հայրենիք, թէև ներկային մէջ կ'ապրէր : Բանաստեղծ էր, ուստի և մարգարէ :

Ջերմեռանդ էր նա իւր սկիզբների մէջ . սահայն, վեհանձն և ազատագի, կը լքէր մի սկիզբերբ զգար թէ զուրկ էր դա ուղղութիւնէ : Ճշմարիտին առջև միշտ բաց էր իւր սիրտ, որպէս ծովն արեւին առջև : Իւր հոգի, որ մի բաժակ էր խանդով լի, չը գիտէր վարանիլ . նա մի նորընծայի բոցովն կը յարէր :

Մի առ մի թողած էր նա այն նախապաշարումներ 'զորս մարդ ընկերական մթնոլորտէն կը ծծէ : Հին կապերն խղած էր, և նոր թեւեր ստացած : Չգացած էր թէ աշխարհ կը քայլէ . համոզուած էր թէ առաջդիմութիւնն մի ճակատագիր է : Ամեն խնդիրի մէջ, կը նախազգար այն լուծում 'զոր պիտի տայ մի անաչառ ապագայ : Չերմ գրաբարեան եղած էր, Չերմ աշխարհաբարեան եղաւ . հրաժարեցաւ մահէն, և կեանքին փարեցաւ : « Մի մեռած լեզու գործածելն, կը գրէ վիկդ.օռ Իւկօ իւր մի նոր և հզոր մատեանի մէջ, իւր մտածում գերեզմանի դատապարտել է » :

Ահա այս կորուստի վրայ կը մտածէի Եսրայի մած :

Կը մտածէի թէ այսպիսի երիտասարդներ ,  
իւրեանց հասակի ծաղիկն հողին յանձնելով ,  
մարդկային հորիզոնէն աստղներ կը մարեն . կը  
մտածէի թէ , երկար և տաժանելի աշխատանք-  
ներէ յետոյ , երբ մարդ հազիւ կը սկսի նոցա ե-  
րախայրիք իւր նմանների ընծայել , դառն է տես-  
նել մահն որ կը ցցուի իւր առջև . կը մտածէի թէ ,  
այս անժամ նախճիրների մէջ՝ , շատ հանճարներ  
կը կորչին անժանօթ , չը կարենալով պարզել իւ-  
րեանց հոգիի բոլոր մեծութիւնն , չը կարենալով  
աշխարհակալել այն անմահութիւն ում արժան  
էին թերևս . և կ'ասէի ցաւագին . « Ի՞նչ խոր-  
հուրդ կայ , ո՞ր Աստուած , այս անթիւ դա-  
գաղների մէջ որք , Ա.բ.է.լ.ն 'ի վեր , իրարի կը յա-  
ջորդեն խուռներամ : Ի՞նչ կայ այս անխնայ պա-  
տերազմի մէջ , ուր շատեր կ'անկնին իւրեանց  
նպատակի չը հասած , իւրեանց գործ կիսատ  
թողած : »

Այս հեղձամղձուկ խոհեր կը պաշարէին 'զիս  
երբ , « Մանզումէի էֆէնդեարի » ի մէջ , տեսայ այ-  
սօր ձեր վսեմ յօդուած :

Կարդացի 'զայն , և , վերջին տողէն յետոյ ,  
զգացի թէ մահասարսուռ մշուշներն սրբուած  
էին հոգիէս : Տաօլանին օրրան յաջորդեց , գիշե-  
րին արշալոյս :

Համոզուեցայ թէ մահն կարող չ'է խզել ա-  
ռաջդիմութիւնն , քանի որ մի քնարէ յետոյ ,  
որ կը փչրուի , մի հզօրագոյն քնար կը բարձրա-  
նայ , քանի որ մի հանճարէ յետոյ , որ կ'անկե-  
տի , մի վեհագոյն հանճար կը ծաղի լուսաճա-

ճանչա Գործն , 'զոր մի գործաւոր կը լքէ ան-  
կատար , մի նոր գործաւոր կ'երնէ և կը շարու-  
նակէ 'զայն . այդ գործ պիտի լրանայ վեր-  
ջապէս , զի առաջգիմութիւնն կը յաղթահարէ  
ամեն խոչընդոտ : Էաս , մի ժայռի վրայ նստած  
կ'աղաղակէր . « Ես պիտի ազատիմ աստուած-  
ներին հակառակ » :

Ձեր յօդուած , ՅԾ ի տենդովն գրուած , մը-  
խիթարեց 'զիս , և շնորհակալ եմ ձեզ :

Արի էք դուք և խրոխտ . մի առաքեալի ա-  
ւիւնն կ'ողողէ ձեր հոգի . ձեր լեզու մի բոց է ,  
ձեր գրիչ մի շանթ :

Պ. Տէրոյենցի դէմ , որ մի հայ Ղուի Վէօյեօի  
յիշատակն պիտի թողու , կը պաշտպանէք դուք Պ.  
Փորթուգալեանն և « Գրական Փորձեր » ի հեղի-  
նակն . ուրախ եմ , ոչ այն ներբողների համար  
'զորս կը շուայլէք ինձ , զի գիտեմ թէ արժան  
չը պիտի լինիմ դոցա երբէք , այլ այն եռանդի  
համար որով ձեր զինակիցների զօրավիդ կը  
կանգնիք :

Ապրեցէք , և աճեցէք : Հայն պէտք ունի քա-  
ջերի :

Թէ խումբ էք , լեզէոն եղէք . թէ լեզէոն  
էք , մողովուրդ եղէք :

Ձեր հզօր ամերի մէջ առէք ազգային կրօնն  
և ազգային լեզուն , և ցունց տուէք նոցա , որ-  
պէս զի թօթափին ղեղծումներն և մողորում-  
ներն :

Ոչ կրօնն , ոչ լեզուն պատճառ են մեր ա-  
ղէտների : Կուրութիւն , տգիտութիւն . սոքա  
ահա կը խրամատեն ազգային տունն :

Ելէք ուրեմն դոցա դէմ, ելէք ահեղ և քա-  
ջալանջ :

Հայութիւնն ճգնաժամի մէջ է. մեծ և հան-  
դիսաւոր օրեր կը սպասեն նմա :

Պէտք է շարժիլ, պէտք է կռուիլ, պէտք է  
յաղթել :

Պէտք է որ գրիչներն սուրի փոխուին, ձայ-  
ներն որոտումի :

Ատուած և Լոյս, Ազգ և Հայրենիք :

Մանչեսթէ Էֆէտը

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

## ԱՌ

### ՆԱՀԱՊԵՏ ՌՌԻՄԻՆԵԱՆ

Յ ԴԵԿՏԵՑԵՐ 1876 .

Մի բառ կ'ուզեմ արտասանել տաղանիդ վրայ  
Հազիւ մի ամի մէջ, երեք հոյակապ և սի-  
րելի էակներ հողին կը յանձնեմ, և երիտասարդ  
հոգին, ում գուցէ վայելուչ էին սոխակի եր-  
գեր վարդերի վրայ, բուի վայուճներ կ'արձա-  
կէ գերեզմանէ գերեզման :

Ո՛ր Ռուսիներան, ճակատդ ծածկուած է մի  
չուսապսակով ուր կը ցոլան երեք ասողներ, գի-  
տութիւն, բանաստեղծութիւն և իմաստասիրու-  
թիւն. դու ամբիժ նշոյլներով կը փայլիս ազգա-  
յին ասպարէզին մէջ և գրական ասպարէզին մէջ :

Ազգային ասպարէզին մէջ , դու մին ես այն վսեմ գլուխներէ որք տասնամեայ ճիգերէ յետոյ 1881 ի յեղափոխումն յղացան . Հայ ազգի սահմանադրական կենցաղին մէջ , օրէնսդիրի կոչում ունեցար դու . ազգային ժողովների Նեստորն հանդիսացար , և քո բերան , 'զոր մահն անշուքն է թողած , ամբողջ նիստեր գրաւած է իւր պերճախօս ձայնի տակ , 'զոր կը սպառազինէր մի անդիմադրելի տրամարանութիւն :

Գրական ասպարէզին մէջ , դու մին ես այն կորովի հեղինակներէ որք քաջացան դրօշ սարսաղել անցեալին դէմ , ժողովրդային լեզուի վեհապետութիւնն հռչակելով . ընտրողական դպրոցի նահապետն ես դու . որպէս ամեն բարէկարգիչ հալածանք կրեցիր , դու , երկաթէ աշխարհաբարեան , որ Աինեգիրի արիւն ունէիր երակիրդ մէջ . այլ մահն ահա մի օգոստոսափառ վեհութիւն կը գրողմէ երեսիդ վրայ , և ամօթահար կը ցընդին թշնամի և թշնամանք :

Ներքին կեանքիդ մէջ , 'զոր կը գեղազարդէր մի կոյս ճակատ , Յուանստի մի խարտեաշ աստղին տակ ծլած , դու անմուլար միտ , ծաղիկ սիրտ և լոյս հոգի ունեցար : Բժիշկ էիր , այլ մի բժիշկ որ դեղագիրէ աւելի գիրք է գրած , ուղէսլարար և անմոռաց գիրքեր : Աեանքի ձմեռին մէջ էիր արդէն , այլ հոգիդ մի եղանակ միայն կը ճանաչէր , յաւիտենական գարուն : Խանդով կը յարէիր միշտ գեղեցիկին և վսեմին . Իւկօի , Ղամառղինի , Միւսէի և Պայրընի մեծաշուք կջերին ատջև , կ'արդէր քո սիրտ և կ'արտասուէին

քո աչքեր : թէ արձանագործ լինէիր , յոյն արուեստի ուղիղ գիծերն պիտի արտագրէիր . թէ նկարիչ լինէիր , հոռմէական արուեստի մաքուր կտաւներն պիտի արտագրէիր : Ունէիր ճաշակ , ունէիր շափ և ունէիր ներդաշնակութիւն :

Արդէն 1886ին , մի նամակիդ մէջ առ Օտտեան , 'ղոր « պինդ » սիրած ես միշտ , կ'ասէիր . « Ի՛նչպէս չ'ըլլամ առանձնամուլ , երբ կամուրջն անցնիմ և դառնամ ու այն խուժանին մէջ ձեռք մը չ'ելլայ ձեռքս սեղմելու , ձայն մը ձայնիս և սիրտ մը սրտիս պատասխանելու : Շատ էն մարդիկ , լայն է աշխարհս . մարդիկ , աշխարհ , երկինք տաղտուկ էն աչքիս , չը գիտեմ ի՛նչ է ուզածս . սա կ'զգամ որ հոգւոյս նեղ կը թըւի իր ջնջին ծրարը և զանի սլատուէլ կը փութայ . բան մը չ'էմ տեսնէր որ 'զիս զբօսնէ , բան մը որ 'զիս աշխարհիս յարէ . չիք մօտս բարեկամ մը որում սիրտս բանամ . մարդոց արհամարհատ ծիծաղին նիւթ չը տալու համար այո՛ մարդոցմէ հեռի և գուցէ վայրենացեալ՝ ես միւս ևս անբախտ կոչեալ ի սեղան կենին՝ շիրմին հանգիստը կ'ըսպասէմ . . . »

Հանգ չէ՛ անխուով , ո՛ հայր և վարդերտ . անձարդ կոթող պիտի կանգնի տապանիդ վայր , և ապագայն , ոյր հիւստն կուրծքդ կը վառէր , դափնիներ պիտի հիւսէ անմահ յիշատակիդ :

## ՂԱԶԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

21 ԴԵԿՏԵՄԵՐ 1876 .

Շրջանակն կ'անձկանայ հետըզհետէ. աղնուա-  
 [գոյն կոչնականներն անդարձ կը մեկնին կեանքի  
 սեղանէն : Մի ամիսի մէջ կորցուցինք Ռուսին-  
 եան , Այվատեան, և Յովակիմեան 'զոր երէկ հո-  
 ղեցին : Սակայն վերջինն ամենէն աւելի իրա-  
 ւունք չ'ունէ՞ր մեթէ , երբ թողաւ աշխարհ ,  
 կրկնել բանաստեղծի սրտառուչ եղերգն .

Կեանքի խնջոյքին անբախտ կոչնակամ  
 Երեսցայ մի օր , կը մեռնիմ ապա .  
 զի քսանվեց գարուններ միայն անցած էին իւր  
 անբիծ ճակատի վրայէ :

Սակայն , — դիտած եմ 'զայն իւր կեանքի  
 մէջ որ վարժարանէն մինչև գերեզման դրէթէ  
 անընդհատ աչքերիս առջև սահեցաւ , — դա-  
 րունի սխրալի ժպիտն անտարբեր կը թողուր այն  
 երիտասարդի սիրտն որ անզգայ չ'էր ընաւ :  
 Ա՛հ , կըզգար անշուշտ այն անփոխարինելի ժմիտ  
 որ , մայրական աչքերէն անկնիլով , կը ծաւալի  
 մեր հոգիի ամենէն թաքուն ծալերին մէջ , և  
 յուսմէ այնքան կանուխ զրկուած էր նա . — զի  
 վեց լուսին հաղիւ տեսած էր , կ'ասեն , երբ կոր-  
 զեցին 'զայն մայրական գիրկէն :

Թէ երկին նուիրած չը լինէր ինձ մի աննման  
 մայր , իւր վաղահաս որբութիւնի արդիւն պիտի  
 համարէի իմ ողբացեալ բարկկամի մենասիրու-  
 թիւնն . զի խոյս կը տար միշտ մարդերէն 'զորս

բնաւ չ'էր ատեր սահայն . մանաւանդ այնքան  
անդիմադրելի , այնքան անսահման էր իւր սէր  
մարդկութիւնի վրայ , մինչ զի նորա բարւոքումի  
կը նուիրէր այն սլարապ ժամեր 'զորս ուրիշներ  
հեշտութիւնի մէջ պիտի սահեցունէին , Գեռ ու-  
սանօղ էր Ներսիսեան վարժարանի մէջ ուր ճա-  
նաչեցի 'զայն և այնքան հանճարեղ սլատանի-  
ներ , երբ սկսեցաւ խմբագրել մի թերթ , բազ-  
մաման ծանօթութիւններով և լուսամիտ գա-  
ղտփարներով սլարարուած , 'զորս կ'ուզէր տա-  
րածել իւր դեռավարժ ընկերների մէջ . մեր  
խմբագիրներէ շատեր չը սլիտի ամաչէին ստո-  
րագրել այսօր այն յօդուածներ 'զորս կ'արտադ-  
րէր այդ ուսանօղ սլատանիի գրիչն :

Գսլրոցէն դուրս , խմբագրական ասպարէզին  
մէջ , անխոնջ և ուշիմ գործակից եղաւ մի ծե-  
րունի գրագէտի , որ Ներսիսեան վարժարանի  
մէջ իւր դաստիարակ էր եղած , և դաստիարակ  
բազմաթիւ սերունդների : — Այդ սլարտական  
հոգիի յատկանիշն էր մի խոր և յարատև յար-  
գանք ծերերի նկատմամբ : Գուցէ այս պատճա-  
ռով իւր բոլոր ընկերների և բարէկամների ա-  
ւելի համակրանք ունէր ինձ համար , որ միայն  
տիրով եմ երկտասարդ . . . :

Ծիածան է յետոյ Մատիս Յովակիմեանի ըս-  
տորոգիրի տակ յօդուածներ հրատարակեց եր-  
կար , որովք երկտասարդ գրագէտն մի հասուն  
միտ ցոյց կը տար , հազուադիւա իւր տիրի մէջ : —  
Այդ սլահպանօղական թերթի խմբագրատեղին  
համար արդե՞օք կ'ասէր ինձ երբեմն քմծիծաղով .

«Գրծկամակութեամբ կ'ընդունի միշտ ինչ գրութիւն որ իրեն ներկայացուի . . . : »

Այլ թէ՛ այս պատճառով թէ՛ գրական փառասիրութիւնով, որ փառասիրութիւններէ օրինաւորագոյնն է, ընդ միշտ հրատեչտ տուաւ խմբագրական առաջարէզին, և սկսեցաւ գիրքերի մէջ թանձրացունել իւր անսպառ ծանօթութիւններ և ընդարձակ մտածումներ : Երբ մի կողմէ, — զի այդ ազնիւ գրագէտի խօսն այնքան յստակ, առատ և նիւթալիւր էր որքան իւր գրութեան, — երբ մի կողմէ, կ'ասեմ, Ներսիսեան վարժարանին մէջ իրաւաբանութիւն կը դասախօսէր 'զոր ինք յաւելեց այդ դպրոցի յայտագիրին վրայ ուր չը կայ այսօր, և կը դասախօսէր Երեւանի վարժարանին մէջ 'զոր նախ ինք հաստատեց Հասգիւղի մէջ և որ խափանուեցաւ նմանապէս, — աշխարհ յառաջ կ'ընթանայ, — միւս կողմէ երկեր կը պատրաստէր անանձանձիր : Քաղաքագիտութիւնն, ամեն գիտութիւններէ աւելի, յանկուցած էր իւր միտ, և աւելի քան ոչ ոք կենակցած էր ամեն դարերի քաղաքագէտներին հետ . ուստի սկսեցաւ մի առ մի ծանօթացունել 'զայնս Հայ ազգին : Առաջին գիրքն եղաւ Դայեռան. Քրանսացի քաղաքագէտն յետոյ եկաւ աւստրիացի քաղաքագէտն, Մեդեռնիք . և վերջապէս հրատարակեց Գավարն 'զոր, երբ երեւեցաւ նա, ողջունեցի Մատիսի մէջ սա բառերով . «Գավուռ Դայեռանի և Մեդեռնիքի վրայ, հաւատքի և արդարութեան վսեմափայլ արշալոյսն է սկեպտիկութեան և ա-

ւիրաւութեան նսեմական գիշերին վրայ : »

Երբ կը գրէի այս տողեր, կը կարծէի՞, ո՞ր ա-  
րէկամ, թէ ինչ որ գրական կեանքիդ արշաւըսն  
կ'անուանէի, գրական վերջաւըսդ, կտակդ պիտի  
լինէր : Երբ երկու շաբաթներէ յառաջ, իմացայ  
հրատարդ առ կրթական խորհուրդն, այր մի գգօն  
և դործօն անդամն էիր, կրնայի՞ գուշակել թէ  
մի քանի օրերէ յետոյ հրատեչտ պիտի տայիր  
նաև աշխարհի : Կը համարձակէի՞ մտածել, երբ  
երկուշաբթի տեսայ ըղ քեզ մահիճիդ մէջ, ուր  
« ճգնաժամ մը կ'անցնեմ » կ'ասէիր, կրնայի՞  
մտածել թէ այդ ճգնաժամ մահի պիտի յանգի :  
Թէ մի եօթնեակէ յետոյ, փոխանակ աջդ սեղ-  
մելի եռանդագին, շիրմիդ վրայ արտօսրներ  
պիտի հեղուի դառնագին . . . :

Գերեզմանիդ առջև, կ'ուզէի՞ մի վայրկեան,  
ո՞հ, մի վայրկեան միայն աստուածորդին լինիլ,  
Ղազարէ . . . :

Փռնջ

Ե՛՝ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

A 40751

ԱՌ

Ս Ի Ս Ա Կ

16 Մարտ 1877.

Լռութիւնն կը ծանրանայ հոգիիս վրայ. փշտն  
որպէս զի ամբի, հարկ է որ արտայայտուի :

Այլ գոհ պիտի լինիս արդե՞օք լսելով իմ ողբ :



Գու որ կը գանգատէիր իմ լուսթիւնի վրայ , մոռնալով մի վայրկեան , բազմադրազ և բազմա-  
վեշ հոգի , թէ մի մեծ կորուստ շանթաշա-  
րած է 'գիս և դատարարած այս երկար լուս-  
թիւնի . . . :

Այո՛ , կորզուեցաւ վերջապէս մեր գիրկէ այն  
երիասասարդ , որ զհամակրական և բանաստեղ-  
ծական չհիւանդութիւնն արամութիւն և մտա-  
տանջութիւն կ'ազդէր անթիւ սիրտերի . որ վի-  
ճակին վրայ , մտառւտ թէ հեռուստ , լուր կը  
խնդրուէր . . . :

Գերեզմանի մէջ տեսայ 'զայն 'զոր օրրանի  
մէջ էի տեսած , որ մանկական խաղերին ընկեր-  
էի եղած , ընկեր նաև , և , իբր անդրանիկ եղ-  
բայր , առաջնորդ իւր ուսումնական մրցանքնե-  
րի մէջ :

Ասեցի՞ թէ գերեզմանի մէջ տեսայ Արամ :  
Ա՛յ , աւանդ . գէթ այդ սիրտի չ'ունեցաւ իմ ան-  
մխիթար սիրտ : Հեռագիրն գուժեց իւր մահ ,  
քառասուն օրեր կան արդէն . . . :

Այսպէս վեց ամիսներէ յառաջ , հեռագիրն  
աւետեց իւր պսակում մի Եւրոպական ուսում-  
նարանի մէջ :

Այն օր , երանագո՛յնն և փառաւորագո՛յնն  
իւր կեանքի մէջ , այն օր , ուր մեծահամբաւ  
գիտունների ձեռքէն կ'ընդունէր իւր եռ ամեայ ,  
իւր տասամեայ անդուլ աշխատանքի արժանա-  
վայեւ տրիտուրն , լսեց արդեօ՞ք այն չարագու-  
շակ ձայն , որ կը մրմնջէր իւր ալեանջի . « Երբէք  
դափնին չ'է գեղազարդած մի աւելի վեհափայլ

ճակատ . այլ այդ ճակատ , ո՛ր տարաբախտ երիտասարդ , այդ ճակատ պիտի սառի այն եղանակէ յառաջ , ուր կը վերընծիւղի դասինին : »

Լսեց արդեօ՞ք Արամ այդ գուժարեր շուկ : Կերկուանամ . զի բժիշկին ներկայանալով նոյն օր , սապէս խօսեցաւ նմա . « Այսօր աջօղուով կ'աւարտեմ դպրոցական աստարէղս . ճակատիս վրայ կը տեսնես դորա անհերքելի ապացոյց : Հարկ է այժմ որ դարմանեմ վաստակարեկ մարմինս . զի բազմապատիկ աշխատանքով միայն կարելի է ստանալ այն աւելի փառահեղ պսակ , 'զոր ապագայն կը սլատարաստէ ում անթերի կրցաւ կատարել իւր պարտեր առ իւր ընտանիք , առ իւր հայրենիք և առ մարդկութիւն : »

Եսկուլապի աշակերտն մի արգահատական ակնարկ նետեց այն երիտասարդի վրայ , ոյր բնութիւնն այնքան առատօրէն օժտած էր միտն , սիրան և մարմինն , և անկաւ իւր շուրթերէ այն պատուէր 'զոր կարդացինք Անդօնիցի մէջ « Ուղէւորէ' . մանաւանդ դէպ հարաւ : »

Եգիպտոս . ո՞վ չ'է ցանկար տեսնել այդ երկիր . զի

Երբեմն ի խաւարուտ հորիզոնի տիեզերաց ,  
Եգիպտոս նախ լուսավազփուն պարգեաց  
դըրօշ կրքուրեան :

Այն գետի եզրներին վրայ , ոյր կ'ասէ առասպելն , ամպերին մէջ է աղբիւրն , Նեղոսի եզրին վրայ ո՞վ չ'է ըղձար համբուրել հետքերն այն նախախնամային աղջիկի , որ ջուրէն աղատեց Մովսէսն , որ ստրկութիւնէ ազատեց իւրաէլն :

Այլ բնասղէս կը փափաքէր Սրամ մի ողջոյն տալ — և այդ հուսկ ողջոյնն եղաւ , աւա՛ղ , — հայրենական երկիրնն , այն Վհասոյտ երկինն ի , ում համար օտար երկիրի վրայ քանի տարիներ հառաչած էր Մինեօնի նման . կը փափաքէր ողջագուրել մի անգամ — և այդ յետին ողջագուրանք եղաւ — իւր կաթողին ծնօղներ և սիրելիներ :

Ա՛հ . . . մի տխրագին օր եղաւ այն , ուր տեսանք 'զայն կոստանդնուպօլիսի մէջ : Ղալուկն , մահի դալուկն նկարուած էր իւր դէմքի վրայ . կարծեցի մի վայրկեան աչքերիս առջև ունենալ Միլլօսի օրհասականն . . . :

Սակայն . . . այն երկամսեայ միջոցի մէջ , ուր անբաժան կենակից եղաց նմա , կամ մանաւանդ հանդիսատես իւր յամբ մահի , շը լսեցի մի օր այն աղէկիզիկ բառերէ 'զորս բնութիւնին կ'ուզէր Վ անխորհուրդ սուրակ յի մահամերձ այցելուն . երբէք Սրամ շը բողոքաւեց 'դինք այն թերթի որ , դձարագեղ և փայլուն վեց ամիսներէ յառաջ , ամգոյն և գօսացեալ այսօր կը դալդողար ոստին վրայ , և 'զոր վաղ սանակոխ պիտի անէին մարդեր . . . :

Ընդ հակառակն , առաջիկայ դարուներն վրայ կը խօսէր , որ իւր կեանքի ամենէն գեղեցիկ , ամենէն երանաւէտ դարուներն պիտի լինէր , կ'աւեր . զի ամենէն վիսպային , ամենէն բանաստեղծական աիքին մէջ պիտի գտնէր 'զայն . . . : Ղա որ դէռ ոչ իսկ քսանամեայ պիտի թողուր ալ խարհն . մատնանիւ կ'անէր ինձ , ո՛ր Սիսակ , զը-

սաներորդ դարի արշալոյսն . « Մի մեծ դար պիտի լինի այն , կ'ասէր ինձ մի յուզեալ և սրտատրոփ ձայնով , դարերի մեծագոյնն պիտի լինի : Այն բարոյական սկիզբներ , որք կ'ստանհարուին այսօր , պիտի վեհասպետեն այն վեհագոյն դարի մէջ . այն ժողովուրդներ , որք մի անմիա խնամակալութիւնի տակ են այժմ , չափահաս պիտի լինին և ինքնագլուխ պիտի վարեն իւրեանց ճակատագիր . այն ժողովուրդներ , որք կը հեծեն լուծի տակ , պիտի փշրեն իւրեանց շղթայներ » : Եւ յանկարծ աւելի ողէւորուած , « Չ'ե՞ս նըշմարեք , կ'ասէր ինձ այն արշալոյս որ կը ճառագայթէ Մասիսի գագաթին վրայ . . . : Եւ ես շ'եմ երազերս Բանաստեղծին նման . . . »

Սուրբ քաղաքին մէջ , Տէրունական Գերեզմանէն ոչ հեռի , մի շիրիմ կայ , որ կը կրէ անունն այն երկտասարդի , որ այսպէս կը խօսէր ինձ շորս ամիսներէ յառաջ :

Ես հազորդակից եղայ իւր սիրտի ազնուագոյն դգացումներին , իւր միտի վեհագոյն խորհուրդներին : Մայրս հաւաքեց իւր վերջին շունչ , իւր վերջին հրաժեշտ :

Այս միակ ամուր սփոփն պիտի լինի մեր կեանքի 'ղոր երկին վճռեց չը լինիլ բարէբաստիկ :

## ՅԱԿՈՒ ՄԿՐԵԱՆ

12 Յուլի 1876

Գեռ սուգի մէջ է հոգիս, զի դեռ ոչինչ կրցաւ մոռցունել ինձ այն ծաղկահասակ էակ՝ զոր մահն կորզեց հայ աշխարհէն :

Վեց ամիսէ յառաջ, Յակոբ Պալեանի կորուստըն կ'ողբայի. այժմ, Յակոբ Մկրեանի կորուստըն կ'ողբաւ :

Ծանօթ էր ինձ այս երիտասարդ : Շահնազարեան վարժարանի մէջ աշակերտած էր ինձ. բացած էի սիրաս նորա առջև, զի մի ճշմարիտ դաստիարակ իւր սիրտէ կը դասախօսէ քան իւր դասագիրքէ, և զգացած էի թէ Մկրեանի հոգին վեհ լարեր կը կրէր : Մի օր, — երկու տարիներ անցան այդ օրէ ի վեր, — մի ազգային թերթի մէջ գրեցի թէ « կորովի և հանճարեղ » գրիչ ունէր այս պատանի գրագէտ : Ոտխներս « ծայրայեղ » գտան այդ բառեր, և մտածեցին թէ գովեստ կը կարգային մա ոչ զի արժանաւոր էր, այլ զի ներբողած էր 'զիս « Մասիս » ի մէջ, « Գրական փորձեր » ս պաշտպանելով մի իմաստակեպիսկոպոսի գէմ. սակայն, Մկրեանի մահէն յետոյ, դողա իսկ ողբացին 'զայն մեծագոյն գովեստներով, արձակ և ոտանաւոր : Այսպէս է աշխարհ :

Յակոբ Մկրեան, որդի մի յեղափոխական երէցի որ 1880 ի անմահ սերունդին կը վերաբերի, չքնաղ զգացումներով օժտուած էր : Խոր-

չոմ շ'ունէր իւր ճակատ, և ոչ ծալ իւր սիրտ :  
իւր ձայն ճշմարտութիւն կը նշանակէր, իւր  
նայուածք անկեղծութիւն կը թարգմանուէր :  
իւր կերպարան ունէր այն խորհրդաւոր ցոլա-  
ցում որ վաղամեռիկ էակների յատուկ է, զի  
հոգին մարդկային դէմքին վրայ կը պարզէ իւր  
վերջալոյս, որպէս արև որ բարձրագոյն կա-  
տարին կը պահէ իւր յետին ճաճանչներ : Թե-  
թև էր իւր քայլ, իբր թէ շ'ուզէր յարիլ այն  
աշխարհի 'զոր շատ կանուխ պիտի լքէր . նա կը  
նմանէր անցաւոր թռչնիկին որ մի վայրկեան  
դադար կ'առնու ոստին վրայ, և ահա կը թռչի :

Այս հրեշտակ, իւր հրատարակային կեանքի  
մէջ, թշնամիներու նեցաւ : Աստուած թողութիւն  
տայ այն անխիղճ մարդերի որք աշխարհն գե-  
հեծի կը փոխեն արդարին համար . . . :

Եւ սակայն կը սիրէր նա իւր ազգ : Հայրենի-  
քի վէրքերն իւր սիրտի մէջ կ'արիւնէին : Երբ  
հողն ծածկեց նորա գեղեցիկ հասակ, սիրակաթ  
մայրն մի զաւակ թաղած էր և Հայաստան մի  
պաշտպան :

Ահ, այսպիսի տապանները առջև, ոչ այն-  
քան ողբալի կը թուի մեռեալն, զի մահն մի  
փրկութիւն է, որքան այն հէզ ժողովուրդ որ մի  
փրկիչ կը կորցունէ : Այսպիսի սուգեր առանձն  
նական շրջանակէն դուրս կ'ելնեն, և հանրային  
կեանքին վրայ կը ծանրանան :

Եւ երբ հնչէ մեզ համար աւետարեր ժամն,  
պիտի փնտուեմք Պէշիկթաշեանն որպէս զի մեր  
հոգիներ ներդաշնակէ, պիտի փնտուեմք Դուրեան

որպէս զի մեր սիրտերն թրթռացունէ , սլի-  
տի փնտռեմք Սրբաճեանն որպէս զի վասակներ  
ի գիմակն բզկտէ , սլիտի փնտռեմք Պալեանն  
որպէս զի խրատոյս բառնայ մեզ և Մկրեանն  
որպէս զի նախաշաւիղ հորդէ մեր առջև . ի՞նչ  
պիտի գտնեմք , ո՛ր Տէր :

— Մկրեան կեանքի գարունին մէջ խամրած ,  
Պալեան օտար հողի վրայ փռուած , Սրբաճեա-  
նի հեղնօղ շուրթն սառած , Գուրեան արձանա-  
ցած իւր տաղանի վրայ , և Պէշիկթաշեան փըշ-  
րուած իւր աստուածային քնարի տակ :

Այո , պէտք է լալ կենդանին և ոչ մեռեալն ,  
զի մահն մի ռերկնային ազատարար է , որպէս  
կը վկայէ Նամաուդին :

Ի՞նչ կ'արժէ կեանքն և ի՞նչ հրատոյր ունի  
աշխարհ մի վսեմ ոգիի համար :

Աշխարհ մի վայր է ուր մարդ երջանկութիւն  
կ'երազէ և գերեզման կը գտնէ , և կեանքն մի  
արշաւ է հե ի հե :

Կրօնաւորն հաւատ չ'ունի , դատաւորն խիղճ  
չ'ունի , կինն սիրտ չ'ունի , և ոչ երիտասարդն  
աւելն :

Ամեն բան կը խաբէ ըզմեզ և ամեն բան կը  
տանջէ : Մեր մարմին մի թակարդ է մեզ հա-  
մար , և մեր սիրտ մի ընտանի թշնամի : Առա-  
ջինն կը ջանայ՝ զգետնել ըզմեզ ամեն վայրկեան .  
երկրորդն մեր օրեր կը գառնացունէ իւր ան-  
սանձ ձտկումներով և իւր անեզր և անկարելի  
տենչերով :

Այն աչք է գեղեցկագոյն որ աւելի տխուր

կը նայի , և այն ճայն է քաղցրագոյն որ աւելի  
տխուր կը հնչէ :

Եւ երբ զգայուն արարածներէն իջնեմք ան-  
զգայներին , ո՛չ ապաքէն թախիծ պիտի նշմա-  
րեմք և նոցա վրայ : Բնութիւնն սուգ կ'առնու  
ամեն օր . երկին կը հեծէ իւր հովերով , երկիր  
կը հեծէ իւր անտառներով . առուակն կ'արտաս-  
ուէ կողկողածայն , և ովկիանն իւր ցաւեր կ'առ-  
նայ ամայի ծովեզրին վրայ :

Ոյս ընդհանուր աղէտի առջև , արդար չ'է՞  
կրկնել մի վշտակոծ հոգիի սա հառաչ . « Չմէ՞  
այս կեանք , զմէ՞ աշխարհ , զմէ՞ է սէր : »

Եւ երբ , իբր մարդ տառապիլէ յեայ , իբր  
Հայ ալ կը տառապիմ . երբ կը տեսնեմ թէ ա-  
զատութիւնն իւր ջահ կը վառէ յետին գիւղին  
համար , և մեք միայն կը դեգերիմք խաւարի մէջ  
երբ կը տեսնեմ թէ յետին ժողովուրդն կը վը-  
սեմանայ , և մեք միայն կը մնամք ստրուկ . կը  
նուաղի հոգիս , և կը հեծեմ ցաւագին . « Երա-  
նի՛ քեզ , ո՛ Մկրեան : »

Մ-ն-ը-մ-ի էֆէ-ու-ր

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

### ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՐԷԱՆ

21 Յունիս 1877 .

Շատ իրաւունք ունի Բանաստեղծն , աւա՛ղ :

Սուգի զգեստներն կը փոխուին , այլ մեր սիրտ  
յաւէտ սպաշղեաց պիտի մնայ . . . :

Ազգային, ընտանեկան և ներքին աղէտներ  
անընդհատ իրարի կը յաջորդեն : Կը տառապի  
հայրենիքդ, կը տառապի եղբայրդ, կը տառա-  
պի հողիդ . . . :

Մի բարէկամ, հանճարեղ և երիտասարդ,  
թողաւ երէկ ըզքեզ այն վայրկեանի մէջ, ուր  
ազգայէն խորհուրդներ կը յղանայիր նմա հետ :  
Այսօր կը կորցունես մի ուրիշ բարէկամ, այն-  
քան հանճարեղ և աւելի երիտասարդ :

Երէկ Յովակիմեան, այսօր Նարեան :

Եւ վաղ . . . ո՞վ գիտէ . . . :

Ժողովուրդների իմաստութիւնն շատ կանուխ  
անուանեց արդէն երկիրն և հովիտ արտօսրի : »

Ղազար Յովակիմեանի համար, ոյր մահն ող-  
բացի աստ մի ամիսէ յառաջ, ասեցի թէ կը  
սիրէր առանձնութիւնն . Անդրանիկ Նարեան  
ալ անընթացի էր սիրահար :

Մի քանի մտերիմների միայն, 'զորս կանուխ  
գիացած էր ընտրել իւր սիրտ, կը հաղորդէր  
իւր խոհեր, որք մի խոր իմաստասէրի խոհերն  
էին, իւր զգացումներ, որք մի գերագոյն բա-  
նաստեղծի զգացումներն էին :

Իւր տարազայման համեստութիւն հեռի կը  
պահէր 'զայն ասպարէզէն, 'զոր բնաւ չ'էր ար-  
համարհեր սակայն, և ուր կրնար առաջիններէն  
մին լինիլ : Մի անողորմ հիւանդութիւն ալ, որ  
մի քանի ամերէ ի վեր ամեն վայրկեան կը սպառ-  
նար իւր կեանքի, բնապէս ամփոփումի և լու-  
թիւնի դատաւարտած էր 'զայն :

2'եմ յիշեր լաւ թէ ո՞ւր տեսայ նախ այն ազ-

նիւ Երիտասարդ , որ մի անդ իմադրելի համակ-  
 րանք կ'ազդէր : Արդեօք իսկիւտարի մէջ , այն  
 և երջանիկ իսկիւտար յի , որ , աւա՛ղ , հետըզ-  
 հետէ աւելի շարարաստիկ կը լինի . . . գէթ  
 ինձ համար :

Սակայն ինչ որ կը յիշեմ որոշ , սա է թէ ,  
 երկու տարիներէ յառաջ , մի ամբողջ ամիս ան-  
 ցուցի նմա հետ Ալէմտաղի մէջ , այն և գեղեցիկ  
 Ալէմտաղ յ , ուր կ'երթար և իւր կորսուած հա-  
 ճայքներ վերստին գտնել յ անմահ Պէշխթաշ-  
 լեան :

Արշալոյսին հետ կը թափանցէինք այն ան-  
 տառների մէջ , ուր խորհուրդ և նուազ հաւա-  
 սար կը թագաւորեն : Արշալոյսն անդ կը գըտ-  
 ֆէր ըզ մեզ : Քուեն իսկ , քուեն անդ որբաւէտ , հա-  
 զիւ կը խլէր ըզ մեզ երկնային զմայլումի ծոցէն :

Այլ , երկարատե չը պիտի լինէր այս հեշտալի  
 կենակցութիւն , որպէս ամեն երանութիւն : Սի-  
 րարոյր Մայիսն հրածեշտ տուաւ , և նմա հետ  
 սիրանուադ թւչունն :

Ուստի մեք ալ հրածեշտ տուինք Ալէմտաղի :  
 Ես ուղէւորեցայ գէպ Արեմուտ . և իմ բարէ-  
 կամ . . . իմ բարէկամ սկսեցաւ մաքառիլ ,  
 յետաձգելի համար այն անդարձ ուղէւորու-  
 թիւն , 'զոր մօտալուտ վճռած էր Եպիստարոսի  
 աղիտաբեր պատգամն :

Այս առաւօտ Անդրանիկ Նարլեան շուեց աշ-  
 խարհէ :

Նորա , որք տեսան 'զայն մեկնիլ այնքան  
 արագ , ասեցին , դառնապէս արտասուելով .  
 Եկանուի մեկնեցաւ . իւր շուրթեր հապիւ հպած



էին հաճոյքներն բաժնակին . . . :

Կ'որո՞ւամ ես ալ ըզքեզ, ո՛ր Անդրանիկ: Եւ ո՞վ աւելի արժան է ողբի քան դու, որ ունէիր մի սիրտ ոսկիէ և մի նկարագիր երկաթէ, զառնուկ, երբ ճանիրաւի նախաւր-տասարդ, ուրիժ, որ սախտէին առջրկեանի մէջ, մի խորին պատկառ ունէիր շքե-այի-համար և մի անսահման հաւատ ապագային համար:

Ողբալով կ'որո՞ւամ ըզքեզ, ո՛ր իմ բարէկամ. . . :


Այլ, վեր վերցունելով վտարեկ գլուխս, շուրջս յաժեցունելով արտասուածոր աչքերս, երբ կը տեսնեմ . . . բարին որ մի սլաք ունի կողին մէջ և չարն որ մի պսակ ճակատին վրայ. երբ կը տեսնեմ մարդասէրն խաչի վրայ և մարդասպանն դաշի վրայ. երբ կը տեսնեմ ժողովուրդներ, Որովայն և Մամոնայ դիքերին երկրպագու, որք կը յափրին աջողումի մէջ և կը տեսնեմ ազնիւ ժողովուրդներ, առաջապահ քաղաքակրթական բանակի, Ղորս ոգէսպառ կ'անեն տանջ և վիշտ, և ոյց հեծեր անարձագանք կը մնան աշխարհի մէջ. յայնժամ . . .

Յայնժամ կ'արդարանայ աչքերիս առջև մահն որ անխտիր կը հնձէ դեռապիթիթ և ալէւոր գլուխներ:

Յայնժամ, գերեզմանիդ առջև ակամայ կ'ելնէ սիրտէս քանաստեղծի հառաչն Մկրեանի շիրիմին առջև. Երանի՛ քեզ, ո՛ր Նարեան . . . :

Փետր


Ե. ՏԷՄԻՐՃԻՊՇԻՆ



Ինձ համար  
"ակայն ինչ որ  
ենք է

### Ց Ա Ն Կ

Զօն	3
Նախորդան	5
Մ. Պ. Յ. Սլաճեան	7
Ա. Նահապետ Ռուսինեան	11
Ղազար Յովակիմեան	14
Ա. Սրսակ	17
Յակոբ Մկրեան	22
Անդրանիկ Նարեան	25



(12)

A  $\frac{\text{II}}{40751}$

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ



Ե. ՏԷՄԻՐՃԻՊՈՇԵԱՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Գին 5 դրուշ ողջ թղթ աղում





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220040751

A<sup>ii</sup>40751